Եւ այսօր յորում ի Վանկա կանգնեալ կայաք՝ շարն ի շար և Բ Բ և Գ Գ ոգի գային ի պատերազմէն։ Նոքա որ ի տեղս կ'առնեն ԴՌ ըստակ և կու երթան ընդ նոսա վասն թի քաշելոյ՝ ի ժամանակ պատերազմի անկեալ ի ծոմն և լողալով զերծեալք յայնմանէ գային մերկ և գլխիբաց, բոկոտն և խեղաթիւր. և զմնացեալ նաւքն թողեալ են անդ ԺԲ և ոմանք ԺԶ ասացին։

Բշի (23 Յունիս) առաւօտուս եկն վէզիրն որ ասի Պոյնուէկրի, մտեալ ի թագաւորն և գնացեալ ի պալատն։ Կիրակի յէրէկի օրս զՂումղափուի ԺԷ մէյխանայ կոտորեալ և աւիրեալ, պատճառելով թէ մէչիտին մօտ է. այս եղև ֆէթվայոմն մուֆտիին։ Եւ Մայիսի ամսուս զՊալըխպազարի մէյխանայքն վերուցին հրամանաւ մուֆտիին, զոր ի ժամանակի Մուրատ փաշային չինեցին. ի վաղուց կայր անդ եւ սակաւ էր եւ ի նորին ժամանակն բազմացուցին[1]), եւ հարկս տային բազում թագաւորին, և զսոսա որ վեր առին, նա՛ յետ աւուրց զՂումղափուի ԺԷ և ԺԸ մէյխանայ վերուցին։ Եւ լու եղև աւուրքս թէ մուֆտին ասեր թէ Ի քաղաքիս մէջն եկեղեցի կայ Հայոց, վասն այն մեր բանն չի առաջնորդիր։

Դշի օրս (25 Յունիս) Էսիլի թոռն առեալ ի ժողովրդոցն մէկ քանի ոգի յաննշան արանցն, բերեալ առաջի Մարտիրոս վարդապետին՝ խնդրել արձակել ի կապանաց միջնորդութեամբ Նուրէ որդոյ Իպրահիմ Զէլէպուն, որ Բ շաբաթ ի վերայ բանիցս ընթանալով թէ Տո՛ւք զփիլոնս դոցա զի մի՛ երթեալ մի չար ծնուցանեն, և յետ ժամանակի որպէս կամիք արարէք։ Եւ բազում բան եւ խօսք եղեալ եւ բազումք ասացին թէ Այդ է բարի։ Եւ Մարտիրոս վարդապետն ևս

1) բազմեցուցին.